


ՄԱՐԴԸ ԲՈՒՐԱՎԵՏ ՈՒ ԳՈՒՆԵՂ ՄՈՒՐԱԿԻՑ

Posted on March 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երեւան, 23 Մարտ 2022

Հայաստանի գեղանկարչական ներկապնակում մի վառ երանգ կա, որ իր աբշիռ եռթյամբ զմայլանքի, հիացմունքի քուրա է: Հրանտ Թադևոսյանն է՝ ԹԱԹՈՍԸ:

Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն, լինի վերացական ժանրի, նատյուրմորտ,

դիմանկար, թե բնանկար, գեղեցիկի, վեհի հաղթանակի շքերթ է, կյանքի հարատևության բացված գաղտնագիր ու խորհրդանիշ:



Լինելով վերացական և դիմանկարային ժանրի լավագույն վարպետներից մեկը, այդուհանդերձ, Թաթոսի բնապատկերներն առավել քան հանդիսային են, հատկապես՝ բնության մեջ պատկերված կենդանի, շնչող ծաղիկները, որոնց գեղագիտական տպավորությունները միայն կփորձեմ շարադրել՝ առավել ընդգրկուն վերլուծությունը թողնելով մեկ ուրիշ հարմար առիթի:

Թաթոսի կտավներում բնության խորհուրդը հավերժության մեջ է, հավերժության խորհուրդը՝ վայրկյանի: Ահա այդ վայրկյաններից մեկը, «Գարուն» է վերնագրել: Այստեղ տարվա չորս եղանակներն էլ հառնում են դիտողին, ձմեռը՝ Արագածի ձյունառատ գագաթներով, աշունը՝ բարձրադիր լանջերին սփռված դեղին հասկերի ալիքներով, գարունը՝ ստորոտում, ծաղկել-պտղաբերելու երկունքով բռնկված ծառերի սպասումով: Իսկ որտե՞ղ է ամառը: Ամառը գույների մեջ է՝ տաք, կիզիչ, վառ: Ամառն այս ամենի ներքին տարերքն է, կիրքը:




Թա

թոսն իր հանդիսատեսին մղում է մանկան հայացքով նայել հայրենի բնությանը և
նորից-նոր հայտնաբերել նրա կատարելիությունն ու թովչանքը:

Պետք չեն պատմաբանների, աստվածաբանների պնդումները, թե Աստծո դրախտը
Հայաստանում է եղել: Այն հնարավոր է տեսնել Թաթոսի կտավներում:

-Թաթոս, դու դրախտում եղե՞լ ես: -Ինքդ
ասացիր:



Նման երկխոսություն, իհարկե, չի եղել, հարցի պատասխանը նրա
ստեղծագործություններն են տալիս, որտեղ ծաղիկների գույնը բույր ունի և բույրն՝ իր

գույնը, որտեղ լեռները մեր անորոշիչության պատմության գործող անձինք են, միայնակ սուսին՝ հաստատուն հավատք , ծաղկած ծիրանենին՝ ավիշ, զմրուխտ անդաստանը՝ խանձարուր, լազուր երկինքը՝ անսահմանություն թևող երազանքներ: Աստծո դրախտ, որն ստեղծվել է միմիայն ընտրյալների համար:

Այդ ամենի համայնապատկերը՝ հայրենի բնությունը, ներկայանում է ասես համատիեզերական գեղեցկության աստվածուհու կերպարով՝ անշապար, բնական, չպարտադրող, տենչալի և այնքա՛ն ազնիվ ու անբիծ, որ ցանկություն է առաջանում աղոթել՝ «*Այս դրախտին հնձ արժանի արա, Տե՛ր*»... Մի՛ սթափվի՛ր... դեռ մի՛ սթափվիր, վայելիր այս հրաշքը, այլապես կհայտնվես շրջանակված նկարի առջև:



Բնավորությամբ Թաթոսը լուռ է: Ոչ թե լռակյաց կամ քչախոս, այլ, պարզապես, լուռ է՝ խոհեմական, մեղմիվ: Նրա խոսքամիջյան դադարներն անգամ էականություն ունեն, արտասանվող ամեն մի բառին նախորդում է խոկուն, կշռադատված, ակնթարթային դադարը: Եվ դա էլ գույն է, բնավորության գույն, որի լռությունը դրոշմված է նրա տասնյակ կտավների եռության մեջ: Դիտեք նրա նկարները և կհամոզվեք, որ այդ գունեղ պերճանքները իմաստասերի խորը լռությունն ունեն, խոհական հանդարտություն, բայց ո՛չ երբեք դադար: Արտաքնապես չերևացող մեկ ուրիշ կյանք ու շարժում կա այնտեղ, կենդանի ու շնչող, նման՝ մայրանալու սպասող այն գեղեցկուհուն, ով վարկենական քարանում է՝ զգալով իր պտղի շարժումը...




Թվ

ում է, թե 80-ն անց նկարչին այլևս ոչնչով չես կարող զարմացնել: Ինչո՞վ կզարմացնես այն գեղագետին, ով տարիքի և հանրության գնահատության բարձունքում է՝ ՀՀ ժողովրդական նկարչի պատվավոր կոչումն ունի, [Հայաստանի նկարիչների միության](#), Արվեստի միջազգային ընկերության և նկարիչների միջազգային միության ([ՅՈՒՆԵՍԿՕ](#)), ԱՄՆ Տեխաս նահանգի Պոմպեո Կոպինիի Գեղարվեստի ակադեմիայի անդամ է, [ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային](#) համալսարանի դասախոս ու պատվավոր պրոֆեսոր, Երևանում, Վանաձորում, Մոսկվայում, Մարսելում, Կարլսրուեում (Գերմանիա), Բանբերգում, Քոբուրգում, Սյունիսենում, Փարիզում, Ժնևում, Լիոնում, Տուրում, Լոս Անջելեսում, Բուենոս Այրեսում՝ անհատական մի քանի ցուցահանդեսներ... Բայց, չէ՛, նա դեռ զարմանում է, զարմանում է, երբ նկարակալն ու շրջանակված կտավն ուսած գնում է բնության գիրկ և իր զարմանքը դրոշմում կտավի վրա: Հերթական ստեղծագործությունն ավարտելուց հետո զարմանալու հերթն արդեն մերն է՝ դիտողինը:



Թաթոսի պատկերավորումներում երկրաչափական հորինվածքն ու գունախաղերը, հատկապես վառ կարմիրը, անապակ գմբուխտն ու նկարիչների համար միշտ «կամակոր» կապույտը՝ ենթատեսքտային իմաստներ են հուշում, որոնց ընթերցումն ավելի բովանդակալից է դարձնում ասելիքը: Կակաչների պատկերների մեծ մասն, օրինակ, գեղեցիկի, ազնվության, նրբագեղության ներկայացում են, բայց երբ դրանք պատկերվում են խոնարհված աղոթատան կամ ավերիչ տարերքին հաջորդած անդորրի համայնապատկերում՝ դառնում են կորուստների, նահատակների հոգու խորհրդանիշ: Ծաղկած փշենին գեղեցիկ վերսլացքով է հառնում դաշտում՝ ցուցամուրրեն ներկայացնելով պայթած կոկոնից հորդող մանուշակագույն, նուրբ թերթերով ծաղիկը: Նրա կերպարում ոչ մի խայթող բան չկա, ծաղկաբույլն իր գրավչությամբ թույլ չի տալիս նկատել ու խորհել փշերի մասին: Սակայն, երբ այն հայտնվում է մշուշների մեջ անհայտացող հեռավոր Արարատի ֆոնին, ուստի՝ որքան էլ սլացիկ, ծաղկաբույլը, որքան էլ գունեղ, հոգու մեջ կորուսյալ Երկրի անսանձ կարոտի փոթորիկ են ալեկոծում՝ ճաղկող փշեծաղկի տված ցավով...



Վարպե
տի գործերում ենթատեսքտային մեկնությունները գաղտնագրված չեն, դրանք խոսուն

ԵՆ, ցուցադրող, հուշող և գեղագիտությամբ լեցուն:

Հետաքրքրական է, որ նկարիչը մեծ պատկառանք ունենալով իր ավագ արվեստակցի՝ մեծանուն Մարտիրոս Սարյանի հանդեպ, մի գործ ունի, որով, ասես, փորձել է երկխոսել և՛ նրա, և՛ մեզ հետ, դրանով պարզել մինչ այդ մեր չիմացածը: Խոսքը 2009 թվականին արված «Քարինջ գյուղը Դսեղից» կտավի մասին է, որով Թաթոսը հավակնել է նույն դիտակետից՝ նույն բնապատկերը նկարել, ինչը Մ. Սարյանը պատկերել է 1952 թվականին՝ «Քարինջ գյուղի կուլտնտեսությունը Թումանյանի լեռներում» վերնագրով: Դա հանրահայտ այն նկարն է, որի պատկերը կա Հայաստանի 5000-անոց դրամի վրա: Ի միտ բերենք, որ նկարն արվել է Ստալինի կենդանության օրոք, և ընկալենք այսօրվա համար տարօրինակ հնչող վերնագրի նախապատճառը:

Մ. Սարյանի գործն իր հորինվածքով, գույների համադրությամբ և



տարածականությամբ, անկասկած, տաղանդավոր ստեղծագործություն է, թեև, խորքային իմաստում, ուս-ուսի հենված լեռների, համայնական դաշտերի կանոնավոր սփռվածքի, գյուղի հաստատուն տեսքի և նույնիսկ հանդ դուրս բերած կովերի համախմբում՝ միատեղ տնտեսություն վարելու ջատագովությունը կա: Միաժամանակ, ներքուստ հակոտնյա լինելով Ստալինի քաղաքականությանը, Մ. Սարյանն այդ կտավում չի օգտագործում իր լուսավոր, վառ ու ջերմ գույների գամման: Գերակշռող դեղնադարչնագույնի և զարթոնք խորհրդանշող կանաչի զուսպ երանգներն են:

Այլ է Թաթոսի «Քարինջը»՝ թոթափված դասակարգային ենթատեքստերից, ազատության, անկաշկանդության ոգով: Էպիկական վեհությամբ հառնող կապտավուն լեռների համախումբը ներկայանում է ինքնաբավ, պատմական ու խրոխտ, իսկ գյուղի համայնապատկերը նախշագարդ գորգի պես փռված է դրանց ոսկեգօծ փեշերին:

Վարպետների այս երկխոսությունը ժամանակի երեք չափումներն ընդգրկելուց բացի, հայրենիքի, նրա պատմության, հոգսերի և հպարտության, այդ ամենով՝ հավերժական խրոխտ ու աննվաճ լինելու խորհրդով է պարուրված:



Թաթ

ոսը շարունակում է անդուլ ստեղծագործել, ծաղիկներ նվիրել մարդկանց: Նրան շատերը համեմատում են հանրահայտ Կարաբալայի հետ, ով Երևանի փողոցներում թարմ ծաղիկներ էր նվիրում համաքաղաքացիներին: Մինչդեռ, Հրանտ Թադևոսյան-Թաթոսը մուլորակի քաղաքացի է, այն մուլորակի, որտեղ անկրկնելի բուրավետ ու գունեղ ծաղիկներ են աճում:

Այդ մուլորակի անունը Հայաստան է:

Վարպետի գունեղ աշխարհը (տեսաերիզ). սեղմել [այստեղ](#) կամ նկարի վրա:



ԱՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԵՒ ԱՏՈՐԱԳՐԱՀԱԻԱՔ ՓՐԿԵՆՔ ՀԱՅԵՐԵՆԸ

There are no comments yet.